ԼՐԱՏՈՒ

ՎԱՉԳԵՆ ՉԱԼՈՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ
(ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վազգեն Կարապետի Չալոյանի ծննդյան 80 տարին։ Վ. Չալոյանը եղել է սովետական շրջանի հայ փիլիսոփայության պատմության մարքսիստական ուսումնասիրության ըստեղծողը, հայագիտության այդ բնագավառի հիմնադիրը։

Վ. Չալոյանը ծնվել է 1905 թ., Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական)։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, 1923 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմա-հասարակագիտական ֆակուլտետը, որն ավարտել է 1928 թվականին։

Վաղ է սկսվել Վ. Չալոյանի աշխատանքային գործունեությունը։ Դեռևս ուսումնառության տարիներին նա որպես մանկավարժ աշխատում է տեխնիկումներում, իսկ հետո նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր կենտրոնական կուսակցական դպրոցում՝ դասավանդելով հասարակագիտություն։ 1930—1934 թթ. Վ. Չալոյանը դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթաց է կարդում Երևանի բժշկական ինստիտուտում, ապա նաև Երևանի պետական համալսարանում, միաժամանակ վարելով կուլտուր-պատմական (պատմություն, գրականություն, կերպարվեստ) թանգարանի դիրեկտորի պաշտոնը։ Վ. Չալոյանի կյանքում նշանակալի էին ասպիրանտական ուսումնառության տարիները Մոսկվայում։ 1934 թ. նա ընդունվում է Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ փիլիսոփայության պատմություն մասնագիտության գծով։ Ավարտելով ասպիրանտուրան նա աշխատություն է գրում Եղնիկ Կողբացու մասին և 1939 թ. այն պաշտպանելով որպես դիսերտացիա՝ ստանում է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Այդ ժամանակվանից ի վեր, մինչև իր կյանքի վերջը (1981 թ. մարտ), նա նվիրվում է հայ փիլիսոփայության պատմության հետազոտմանը և ավելի քան 40 տարի համառորեն ու հետևողականությամբ աշխատում միշտ գիտական միևնույն բնագավառում։ Իր քրտնաջան և բեղուն աշխատանքի շնորհիվ նա կրտսեր գիտական աշխատակցից բարձրացավ մինչև գիտությունների դոկտորի աստիճան, դարձավ Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ (1965 թ.)։

Վ. Չալոյանն առաջինը ձեռնամուխ եղավ հայ փիլիսոփայության պատմության մասնագիտական ուսումնասիրությանը։ Երբ նա ակսեց այդ գործը, չէր կարելի հիշատակել մի աշխատություն, որը ամբողջովին նվիրված լիներ անցյալի հայ որևէ մտավորականի փիլիսոփայական հայացքների լուսաբանմանը։ Երբ Վ. Չալոյանը գրում էր «Եղնիկ Կողբացու ուսմունքի հարցի շուրջը» աշխատանքը, որը հրատարակվել է 1940 թվականին, կարելի է ասել, լիովին խոպան էր հայագիտության այդ անդաստանը։ Սկսելով հայ փիլիսոփայական մտքի սկզբնավորման ժամանակաշրջանից, նա այնուհետև ուսումնասիրեց Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները, որը դարձավ նրա դոկտորական դիսերտացիան (1946)։ Այս մենագրության մեջ Վ. Չալոյանը տվել է ինչպես Դավիթ Անհաղթի ժամանակաշրջանի բնութագիրը, նրա մասին եղած գրականության տեսությունը, այնպես էլ մանրամասնորեն լուսաբանել է Դավթի փիլիսոփայական ուսմունքը, շարադրել նրա տրամաբանական հայացքները, ցույց տվել նրա տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ, նրա ազդե-

ցությունը հետագա դարերի, հիմնականում հայ փիլիսոփա-մտածողների վրա։ Երկար տարիների հետազոտության արդյունք է նրա «Հայ փիլիսոփայության պատմություն» մենագրությունը, որը ռուսերեն լեզվով լույս տեսավ Երևանում (1959)։ Այս աշխատության հատկանշական կողմերից մեկն այն է, որ նրանում լուսաբանվում են աշխատավոր ժողովրդի մշակույթն ու փիլիսոփայությունը, բացահայտվում է նաև շահագործող դասակարգի պրոգրեսիվ խավի փիլիսոփայական միտքը։ Աշխատությունը հետագայում լույս է տեսնում նաև Մոսկվայում՝ «Հայաստանում փիլիսոփայական մտքի զարգացումը» վերնագրով (1974), իսկ հայերեն լեզվով՝ 1975 թ., Երևանում։ Որպես ազգային փիլիսոփայության պատմության շարադրանք, Մոսկվայի հրատարակությունը իր տեսակի մեջ առաջինն է. այն առաջին անգամ առանձին գրքով ներկայացնում է մի ժողովրդի ազգային փիլիսոփայական ժառանգությունը՝ մ. թ. ա. VI դարից մինչև XVIII դարը ներառյալ։

Վ. Ջալոյանը հայ փիլիսոփայության պատմության այն մասնագետներից էր, որն ակտիվ կերպով հետաքրքրվում և մշակում էր իր առարկայի տեսական մեթոդաբանական սկզբունքները։ Լինելով Հայաստանում Վերածնության գոյության տեսակետը կրքոտ պաշտպանող հայագետներից, նա այդ պրոբլեմին է նվիրել առանձին ուսումնասիրություն, որը հրատարակվել է Մոսկվայում (1963), ապա՝ Երևանում (1964)։ Նրա գրչին է պատկանում նաև «Արևելք-Արևմուտք» նշանավոր աշխատությունը, որը երկու անգամ՝ 1968 և 1979 թթ. լույս է տեսել Մոսկվայում և լեհերեն՝ Վարշավայում։ Այս գիրքը, ինչպես տեսնում ենք, գրավել է ոչ միայն մեր երկրի, այլև արտասահմանյան երկրների գիտնականների ուշադրությունը։ Գրքում նա զարգացրել է այն տեսակետը, թե ոչ միայն Արևմուտքն է մշակույթի զարգացման պատմության մեջ դեր խաղացել, այլև Արևելքը, գաղափար, որն ուղղակիորեն հակադրվում է եվրոսենտրիստական կոնցեպցիային և ունի քաղաքական-գաղափարական որոշակի նշանակություն։

Վ. Ջալոյանը լուրջ ուշադրություն էր դարձնում մեթոդաբանական հարցերին։ Վերջին տարիներին նա գրում էր «Հայ ժողովրդի պատմության փիլիսոփայությունը» աշխատությունը, որը, ցավոք, մահվան պատճառով չկարողացավ ավարտի հասցնել։ «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը և նրա ազդեցությունը հետագա դարերի մտածողների վրա» գիրքը (ռուսերեն) եղավ Վ. Ջալոյանի վերջին աշխատությունը, որը հրատարակվեց Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակի տոնակատարության օրերին (1980)։ Վ. Ջալոյանը այն բախտավորների թվին էր պատկանում, որի գրչի տակից դուրս եկած յուրաքանչյուր ավարտուն աշխատություն լույս է ընծայվել՝ լինի դա հոդված, թե մենագրություն։ Դա բացատրվում է այն բարեխղճությամբ ու խստապահանջությամբ, որով նա մոտենում էր գիտական երկին, որով առաջնորդվում էր գիտական աշխատանք կատարելիս։

Ճանաչված լինելով Մխիթյան մեջ որպես հայ փիլիսոփայության պատմության լավագույն մասնագետ, Վ. Ջալոյանը «Սովետական մեծ հանրագիտարանի» և «Փիլիսոփայական հանրագիտարանի» բազմաթիվ հոդվածների հեղինակ էր։ Նրան է հանձնարարվել գրելու «Փիլիսոփայության պատմություն», «Փիլիսոփայության պատմությունը ՍՍՀՄ-ում» բազմահատոր կոլեկտիվ աշխատությունների հայ փիլիսոփայությանը վերաբերող հիմնական բաժիններն ու գլուխները։ Կարելի է ասել, որ Վ. Ջալոյանի միջոցով են հայ փիլիսոփայական մտքի գլխավոր ներկայացուցիչները ճանաչվել միութենական ընթերցողների կողմից։ Այս առումով էլ նա հայ փիլիսոփայության ակտիվ պրոպագանդիստն ու շնորհալի մասսայականացնողն էր։

Վ. Ջալոյանի գիտական գործունեությունը միայն այսքանով չի սպառվում։ Նա հայ փիլիսոփայությանը մատուցել է նաև այլ բնույթի ծառայություններ. սովետահայ նշանավոր գիտնական Արշակ Ադամյանի հետ 1956 թ. նա հրատարակում է Հովհան Որոտնեցու «Վերլուծություն Ստորոգութեանցն Արիստոտէլի» բնագիրը՝ զուգահեռ ռուսերեն թարգմանությամբ, որով սկզբնավորվում է հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների մատենաշարի հրատարակությունը։ Վ. Ջալոյանը, Ս. Լալաֆարյանի հետ համատեղ, պատրաստել է նաև «Անանուն մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխատության համահավաք բնագիրը, որը գրաբարից ռուսերենի է թարգմանել Ս. Արևշատյանը։ Վ. Ջալոյանը գրել է այդ «Անանուն մեկնութեան» առաջաբանը, որն առանձին գրքով հրատարակվեց 1961 թ.։ Վ. Ջալոյանի ռուսերեն թարգմանությամբ լույս է ընծայվել նաև Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» նշանավոր երկը։ Հայ անցյալի փիլիսոփայական մտքի հուշարձանների հրատարակումը խիստ կարևոր գիտական նշանակություն ունի, քանի որ դժվարություններով առլեցուն այդ թարգմանությունները ճանաչում են բերում հայ անվանի փիլիսոփաներին, ռուսերենի շնորհիվ նրանց

գործերը դարձնելով ոչ միայն Սովետական Միության, այլև աշխարհի մյուս երկրների գիտնականների սեփականությունը։

Վ. Զալոյանի համառ աշխատանքը, նվիրվածությունը սիրած գործին տվել է իր պտուղները. նա պատկառելի ավանդ է մուծել հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Նրա հետազոտությունների շնորհիվ հաստատվեց ու ամրապնդվեց հայ փիլիսոփայության պատմության գոյության փաստը, որի մասին սկզբում կասկածներ էին հարուցվում։ Նրա շանքերի շնորհիվ այսօր արդեն ոչ ոք չի տարակուսում, որ առկա է հայ փիլիսոփայական հարուստ միտք, որն իր պատվավոր տեղն ունի հայ մշակույթի դարավոր պատմության մեջ։

Այժմ արդեն շատ է առաջադիմել հայոց փիլիսոփայության պատմության ուսումնասիրության գործը։ Գրվել են բազմաթիվ մենագրություններ՝ նվիրված առանձին հեղինակների, ուսումնասիրություններ՝ նվիրված հայ փիլիսոփայության պատմության առանձին փուլերին ու պրոբլեմներին։ Բայց որքան էլ բազմապատկվեն այդ ասպարեզի նվաճումները, Վ. Զալոյանը սերունդների կողմից միշտ կհիշվի որպես այդ գործի պիոներ, այդ բնագավառի սկզբնավորող ու հիմնադիր։

Վ. Զալոյանը ակտիվ կերպով մասնակցել է միջազգային և համամիութենական բազմաթիվ գիտական սեսիաների, սիմպոզիումների, կոլոքվիումների. փիլիսոփայության պատմության միջազգային համաժողովին (Վառնա, Բուլղարիա), նեոպլատոնիզմին նվիրված միջազգային սիմպոզիումին (Հռոմ), «Վերածնունդ, գյուղացիական պատերազմ և Ռեֆորմացիա» կոլոքվիումին (Բեռլին), «Փիլիսոփայությունը, սոցիալական առաջընթացը» սիմպոզիումին (Մոսկվա) և այլն։

Վ. Զալոյանի ծառայությունները բարձր են գնահատվել կուսակցության և կառավարության կողմից։ Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով. նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը, Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակը՝ «Հայոց փիլիսոփայության պատմություն» աշխատության համար։

Վ. Զալոյանը անսահման սիրով էր նվիրված իր գործին, աշխատասեր էր ու սկզբունքային։ Իր այդ հատկանիշները նա ավանդել է իր գործընկերներին։

Իր ծննդյան 80-ամյա տարելիցին Վ. Զալոյանը հիշվում է որպես բազմահմուտ, համառ ու հետևողական գիտնական, փիլիսոփայությամբ ներշնչված մի խանդավառ ընկեր, փիլիսոփայություն, որին նա ծառայեց նվիրումով իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում։

ՍՏԵՓԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտորներ